# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3
# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՌԵԼԻՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ «ՀՀ ՔԾԽ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **12 մարտի 2018 թ.**
**ժամը 11:00**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Կառլեն Ղանդիլյան
Հանձնաժողովի անդամներ՝
ԳՊ/ ԳԱ Ցողիկ Ասատրյան
ԳՊ/ԳԱ Սահակ Ասլանյան
ԳՊ/ԲԱ Հասմիկ Սիմոնյան
ԳՊ/ԲԱ Կարինե Սահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Մագդա Կարապետյան

1. **«ՀՀ ՔԾԽ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացման վայրը, օրը և ժամը:**

(Կ.Ղանդիլյան)

«ՀՀ ՔԾԽ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերը բացվել են 2018 թվականի մարտի 12-ին, ժամը 11:00-ին, ԱՐՄԵՊՍ /ARMEPS/ էլեկտրոնային համակարգով:

2. ***Ներկայացված ապրանքի նախահաշվային գինը.***

| ***Հ/Բ*** | ***Հափաբաժնի անվանումը*** | ***Քանակը*** | ***Նախահաշվային գինը*** |
|---|---|---|---|
| 1 | բենզին պրեմիում | 1300 | 598 000 |
| 2 | բենզին ռեգուլյար | 2600 | 1 144 000 |

3. ***Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները (անունները) և հասցեները***

(Կ.Ղանդիլյան)

| N | **Մասնակցի անվանումը** | **Հասցեն, հեռախոսահամարը, e-mail-ը** |
|---|---|---|
| 1. | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ | ք. Երևան, Ե. Կողբացի 30, flashltdtender@gmail.com |

4. ***Տվյալներ՝ ծրարները կազմելու և ներկայացնելու՝ սահմանված կարգի պահանջներին համապատասխանության մասին.***

(Կ.Ղանդիլյան)

Մասնակից <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն կազմել և ներկայացրել է գնման հայտը սահմանված կարգի պահանջներին համապատասխան:

**5. *Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր ծրարում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.***

(Կ.Ղանդիլյան)

«ՀՀ ՔԾԽ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված կարգով՝ մասնակից <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ն ներկայացրել է հրավերով պահանջվող փաստաթղթերը:

**6. *Տվյալներ՝ մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.***

(Կ.Ղանդիլյան)

Մասնակից <<ՖԼԵՇ>> ՍՊԸ-ի կողմից գնումների ընթացակարգին ներկայացված փաստաթղթերը կազմված են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

**7. *Տեղեկություն «ՀՀ ՔԾԽ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցի կողմից առաջարկված գնի վերաբերյալ***

(Կ.Ղանդիլյան)

| Չափաբաժնի N | Չափաբաժնի անվանումը | Գնային առաջարկը /ՀՀ դրամ/ | | |
|---|---|---|---|---|
| | | գինը՝ առ. ԱԱՀ-ի | ԱԱՀ | գինը՝ ներառ. ԱԱՀ |
| 1 | բենզին պրեմիում | 498 333.33 | 996 66.67 | 598 000 |
| 2 | բենզին ռեգուլյար | 953 333.33 | 190 666.67 | 1 144 000 |

**8. *Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.***

(Կ.Ղանդիլյան)

| *Հ/Բ* | *Չափաբաժնի անվանումը* | *Մասնակիցի զբաղեցրած տեղը* | *Մասնակցի անվանումը* |
|---|---|---|---|
| 1 | բենզին պրեմիում | 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ |
| 2 | բենզին ռեգուլյար | 1 | <<ՖԼԵՇ>> ՍՊԸ |

Հաշվի առնելով նվազագույն գնային առաջարկի սկզբունքը, հանձնաժողովը որոշեց՝ 1-ին և 2-րդ չափաբաժիններով 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել <<ՖԼԵԾ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:*

**9. ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 3-րդ *ենթակետի համաձայն*** էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացնել հարցում առաջին տեղ զբաղեցրած Մասնակիցների՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

**ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի 4-րդ *ենթակետի համաձայն*** առաջին տեղ զբաղեցրած մասնակցին էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցել՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

***10. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հրապարակելու մասին.***

(Կ.Ղանդիլյան)

**ՀՀ կառավարության թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 46-րդ կետի համաձայն**, «ՀՀ ՔԾԻՍ ԳՀԱՊՁԲ-18/1-2» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի վարչական շենքում, ք. Երևան, Տերյան 89, սենյակ 2 հասցեում:

***11. Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները.***

| | | |
|---|---|---|
| **Կառլեն Ղանդիլյան** | ---------- | Իրավական ապահովման և վերահսկողության վարչության պետ (հանձնաժողովի նախագահ) |
| **Ցողիկ Ասատրյան** | ---------- | Իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| **Սահակ Ասլանյան** | ---------- | Իրավական ապահովման և վերահսկողության վարչության գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ) |

| | | |
|---|---|---|
| **Հասմիկ Սիմոնյան** | ..... | Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| **Կարինե Սահակյան** | ..... | Հաշվապահական հաշվառման և ֆինանսական բաժնի առաջատար մասնագետ (հանձնաժողովի անդամ) |
| **Մագդա Կարապետյան** | ..... | Տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար)- ՊՊԳՀԱ |